ԱՇԽԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԵՎԱԳՐ ՊՈՆՏԱՑԻՆ ՈՐՊԵՍ ԽՈՐՀՐԴԱՊԱՇՏ (ՄԻՍՏԻԿ) - ԱՍՏՎԱԾԱԲԱՆ

Չորրորդ դարը եկեղեցու պատմության մեջ բնորոշվում է որպես հոգևոր զարթոնքի շրջան: Քրիստոնեության նվիրյալների առջև ծառացել էր դժվարին մի խնդիր՝ հաղորդակից դառնալ սիրո վարդապետության ճշմարտություններին և հնարավորինս մատչելի քարոզել դրանք հավատացյալ ժողովրդին: Քրիստոնյա խոշոր մտածողներից ոմանք փորձում էին տեսականորեն իրականացնել այդ քարոզը, ոմանք՝ գործնականորոն: Եվագր Պոնտացին, որին հորջորջում են որպես իմաստասեր-աստվածաբան, վանական-ճգնակյաց, փորձ կատարեց իրականացնել աստվածաբանության և գործնական վանականության համադրումը: Նրա մատուցած ծառայությունը եկեղեցուն անուրանալի է. այն արտահայտվում է և նրա կյանքի ու գործերի, և նրա թողած մատենագրական վաստակի մեջ: «Անապատի իմաստունը» իրապես իր իմաստասիրությունը հյուսեց ոչ միայն բառերով, այլ նաև իր գործերով:

Չորրորդ դարում վանական-ճգնակեցական կյանքը ծաղկում էր ապրում: Ճշմարիտ քրիստոնյայի տիպար-օրինակը նրանց համար ներկայացվում էր իր կյանքը Աստծո ճանաչողությամբ և ճշմարտության մտահայումով անցկացնող իմաստուն-ճգնակյացի կերպարով: Ս. Եվագրի կյանքը և վաստակը թույլ են տալիս նրան համարել հենց այդպիսին: Նրա երկերը վկայում են խորը հավատի, Աստծո նկատմամբ ջերմեռանդ սիրո, հոգևոր զարգացման բարձր աստիճանի մասին: Հաղորդակից դառնալով իմաստության շնորհներին՝ նա իր անձնական սխրանքներով հարստացրեց եգիպտական վանականության հոգևոր փորձությունը: Պոնտացու խորհրդապաշտական երկերը կոչ են քրիստոնյայի համար հոգևոր առաքինությունների, ամենօրյա աղոթքների, հոգու նյութազերծման միջոցով կատարելագործման և Աստվածությանը հաղորդակցվելու:

«Եվագրը սկզբում փիլիսոփա էր միայն բառերով, ապա նա հյուսեց փիլիսոփայությունն իր գործերով»:[1]

---

[1] Տես Сократ Схоластик, Церковная история, М-1996, ст. 188.

Եվագի կյանքն ու գործն ուսումնասիրող աստվածաբան-մասնագետները այն կարծիքը հայտնեցին, որ Եվագրը կարողացավ իրականացնել աստվածաբանության և գործնական (պրակտիկ) վանականության համադրումը, որը հետագայում պետք է դառնար դասական:

Այնուամենայնիվ, անկախ այս հորջորջումներից, Եվագր Պոնտացու մատուցած ծառայությունը եկեղեցուն անուրանալի է. այն արտահայտվում է և նրա կյանքի ու գործերի, և նրա թողած մատենագրական վաստակի մեջ: Վանական-ճգնակյաց, իմաստասեր, աստվածաբան Եվագր Պոնտացին ապրել և գործել է մի այնպիսի դարաշրջանում, որն իր առանձնահատուկ տեղն ունի եկեղեցու պատմության մեջ: Այս շրջանում է, որ հեղինակվում են մեծարժեք աշխատություններ, հանձինս Գրիգոր Նազիազանցու, Բարսեղ Կեսարացու, Աթանաս Ալեքսանդրացու, Հովհան Ոսկեբերանի և այլ մեծանուն հայրերի: Չորրորդ դարը բնորոշվում է որպես հոգևոր զարթոնքի շրջան քրիստոնեության պատմության մեջ: Անշուշտ, սա ուներ իր պատճառները, որոնցից առաջինը Հռոմեական կայսրության մեջ քրիստոնեությունը որպես թույլատրելի կրոն ընդունելն էր և հալածանքների ավարտը: Ժամանակի հզոր քրիստոնյա մտածողներն իրենց օրինակով հավատացյալների մեջ առաջացնում էին սեր գիտության նկատմամբ: Ալեքսանդրիան, Կոստանդնուպոլիսը և Աթենքը շարունակում էին մնալ որպես փիլիսոփայական մտքի կենտրոններ: Իսկ քրիստոնեական կրթության համար համայնքային վանական կյանքի հետ արևելքում ձևավորվում էին ուսումնական կենտրոններ: Քրիստոնեական ճշմարտություններով կրթվելով՝ վանականները հեռանում էին անապատ՝ այնտեղ ավարտելով իրենց հոգու կրթանքը:[2] Մտավոր դաստիարակությունն ուղեկցվում էր բարոյական դաստիարակությամբ: Փիլիսոփայություն, փիլիսոփայել այն ժամանակվա քրիստոնեական ըմբռնումով նշանակում էր հոգևոր-շնորհաբաշխ իմաստասիրություն՝ ձեռք բերված ճգնակեցությամբ:

Եվագր Պոնտացին արևելա-քրիստոնեական խորհրդապաշտական բարոյա-գործնական ուղղության ներկայացուցիչն է: «Խորհրդապաշտական» (միստիկ) աստվածաբանությունը նշանակում է ոչ այլ ինչ, քան հոգևոր կյանքի մի կողմ, որն արտահայտում է դավանաբանական սահմանումներ:[3] Լայն իմաստով ամեն մի աստվածաբանություն խորհրդապաշտական է, քանզի երևան է հանում աստվածաբանական խորհուրդ՝ տրված հայտնությամբ:

---

[2] Տես Филарет арх. Гумилевский, Историческое учение об отцах церкви, М. 1996, ст. 11.

[3] Տես Лосский В. Н., Очерк мистического богословия восточной церкви. Догматическое богословие, М.1991, ст. 8.

Հաճախ խորհրդապաշտությունը հակադրում են աստվածաբանությանը, որպես մի ասպարեզ, որը հասու չէ իմացությանը, անմեկնելի խորհուրդ, որն ավելի շուտ տրվում է ինքնահատուկ փորձով, և այն գերազանցում է դատելու մեր բոլոր ունակությունները: Այս իմաստով որոշ հեղինակներ տարանջատում են կրոն հասկացությունը՝ եկեղեցական կրոնը համարելով պահպանողական և սոցիալական, իսկ խորհրդապաշտականը՝ անհատական և ընդգրկուն: Արևելա-քրիստոնեական ավանդությունը երբևիցե չի տարանջատել խորհրդապաշտությունը և աստվածաբանությունը, անձնական փորձառությամբ աստվածային խորհուրդներին հաղորդակից դառնալու և եկեղեցու դավանած վարդապետությանը հավատալու միջև: Ավելին՝ նրանք լրացնում են իրար, եթե խորհրդապաշտական փորձը ընդհանուր հավատամքի արտահայտություն է, ապա աստվածաբանությունը արտահայտությունն է այն բանի ինչը կարող է ձեռք բերվել յուրաքանչյուրի կողմից անձնական փորձառությամբ: Քրիստոնեության տեսությունն իր բարձրագույն աստիճանով ունի գործնական իմաստ, և որքան այն խորհրդապաշտական է, այնքան անմիջականորեն է ձգտում իր բարձրագույն նպատակին՝ միավորում Աստվածության հետ: Աստվածացումը (թեոսիս) Արևելքի կրոնական կյանքի կենտրոնական գաղափարն էր, որի շուրջ էին պտտվում դավանաբանությանը, բարոյագիտությանը և խորհրդապաշտությանը վերաբերող բոլոր հարցերը:[4] Այս առումով է, որ տարբեր մոտեցումներ են ցուցաբերում խորհրդապաշտության (միստիցիզմի) բարոյա-գործնական և վերացարկված-մտահայեցողական ուղղությունները:

Եվագր Պոնտացու կյանքի և գործունեության հետ ամենասերտ առնչությունն ունի եգիպտական վանականության պատմությունը: Չորրորդ դարի երկրորդ կեսից վանականությունը դառնում է զանգվածային շարժում, և նրա ծաղկումը համընկնում է Կոստանդինյան շրջանի հետ: Այս փաստը բացատրվում է նրանով, որ վաղ քրիստոնեական համայնքներն այսպես թե այնպես մեկուսացած էին հասարակությունից և գոյատևում էին նրանից դուրս: Վանական-ճգնակեցական կյանքի ամենաբնորոշ գիծը այն էր, որ ճգնյակյացները հեռանում էին՝ ապրելու անապատում: Եվ հենց այն պատճառով, որ հասարակությունը ծաղկում էր ապրում և կյանքը բարելավվում էր, վանականության մեջ աճում է հոգևոր փորձությունների անհրաժեշտությունը: Վանականությունը տարածում է գտնում Եգիպտոսում, Պաղեստինում, Սիրիայում, Փոքր Ասիայում: Ինչ-որ առումով վանականությունն ըմբոստություն էր և գոյություն ունեցող հասարակական կարգի, և եկեղեցական նվիրապետության դեմ:

---

[4] Տես Богословский вестник (1911), Минин П. М., Мистицизм и его природа, ст. 85.

Եկեղեցին, տիրելով աշխարհին, նրանից փոխառեց վերջինիս անկատարությունն ու մեղքերը, և այն մշտապես ենթակա դարձավ աշխարհի գայթակղություններին: Սրանում է կայանում Եկեղեցու պահանջը վանական ճգնակեցության գոյության մեջ, որը հիշեցնում էր նրան աշխարհում նրա իրական կոչման մասին:[5] Կապադովկյան հայրերը քաջ գիտակցում էին դա և պնդում էին եկեղեցու ծոցում վանական տիպարի (իդեալի) գոյության մասին: Եգիպտոսում առաջին ուսյալ վանականը Եվագր Պոնտացին էր:

Նրա երկերը՝ «Վանական կամ հոգեւոր գործերի մասին», «Աղոթքի մասին», «Մտահայեցող», «Խորհրդածություններ», «Ուղերձ հավատքի մասին», և այլն, ներթափանցված մտքի գերլարումով և հոգևոր սխրանքներով, ճգնակեցական ներքին փորձով և Ս. Գրքի խորը ազդեցությամբ, քրիստոնեական խորհրդապաշտության մեջ իրենց առանձնահատուկ տեղն են զբաղեցնում:

Արևելյան-ճգնակեցական ուսմունքում փրկության տիպարը թեոսիս ն է՝ Աստվածացումը, և նրան հասնելու միակ ուղին հոգևոր սխրանքների կամ շնորհների ճանապարհն է՝ ուղեկցված աշխարհուրացումով, ճգնակեցական ինքնախարազանումով, հոգու նյութազերծումով Կայլն, որը հասու է միայն քչերին:

Եվագրը զարգացնում է այն միտքը, որ հոգին պետք է նյութազերծել, հրաժարվել կեցության նյութական-զգայական կողմից հոգու և մարմնի հարաբերությունը պետք է լինի օրինաչափ և ներդաշնակ: Խոսելով հոգու բանական, ցանկասիրական և զայրացական սկիզբների մասին, հեղինակն այն միտքն է հայտնում, որ նրանցից յուրաքանչյուրը կարելի է օգտագործել և բարի, և չար նպատակներով, այսինքն Աստծո ստեղծած ոչ մի արարած չար չէ: Եվագրն, անդրադառնալով մեղքի և չարի քրիստոնեական ըմբռնմանը, գտնում է, որ չարը անգոյ է, ուրեմն չունի որակ (ուժ), չար է ամեն անկատարը, թերին: Ոչ թե մահն է կորստյան մատնում հոգին, այլ չար վարքը:

Հոգևոր գործերի սահմանը սերն է, իսկ մտահայելու սահմանը՝ աստվածաբանությունը: Հոգու համար խաղաղ վիճակը բնութագրվում է հնազանդությամբ, իմաստությամբ, արտասուքով և աղոթքով, Աստծո նկատմամբ անպարագիծ սիրով, որը արդյունք է ճգնակեցական սխրանքների, և որի ժամանակ պրակսիսը՝ ճգնակեցությունն իր մեջ ներամփոփում է բարեգործության բարոյական պահը: Միտքը պետք է ենթարկվի կատարսիսի, և այդ կերպ միայն հնարավոր է հասնել Աստվածային լույսի հետ հաղորդակցման:

---

[5] Տես Прот. Иоанн Мейендорф, Введение в святоотеческое богословие, Вест-1992, ст. 202.

Կատարյալ մաքրությունն անընհատ պայքարի միջոցով է ձեռք բերվում, քանի որ երկրային կյանքում սրբությունը և կատարելությունը ոչ թե բացարձակ, այլ հարաբերական վիճակ է:

«Հարյուրավորք վեցերորդք»- երկի մեջ, որը բնորոշվում է իր խորը աշխարհայեցողությամբ, փիլիսոփայական, էակաբանական, կրոնական, բարոյական, վախճանաբանական մեկնություններով, Եվագրը, խոսելով Աստծո մասին, ասում է, որ ինչպես լույսը ամենայն ինչ և ինքն իրեն ցույց է տալիս՝ օտար, ուրիշ լույսի կարիք չունենալով, նույնպես և Աստված ամեն ինչ բացահայտումբացում է ու այլ, արտաքին իմաստների պետք չունի: Նա մարդու միտքը վեր է դասում զգայարաններից, քանի որ այն առավել է քան նրանք: Հոգևոր իմացությունը Աստծո շնորհ է և հոգում է բնակվում: Խոսելով հանդերձյալ կյանքի մասին, հեղինակը մարդկային կյանքն այս աշխարհում նմանեցնում է երազի:

Եվագր Պոնտացին փորձում է տալ աղոթքի՝ որպես հոգևոր կյանքի բարձրագույն պահի մեկնաբանությունը: Աղոթքը ոչ այլ ինչ է, քան մտքի զրույցը Աստծո հետ, որի համար պահանջվում է մտքի մաքրամաքուր վիճակ: Աղոթքի պահին միտքը պետք է լինի խուլ և համր, աղոթքն ուրախության և երախտագիտության արդյունք է, այն պաշտպանում է տխրությունից և ծանձրույթից: Աղոթքը միավորում է մարդուն Աստծո հետ, կենտրոնացված աղոթքը մտքի բարձրագույն «մտածումն» է, նրա հաղորդակցումն Աստծուն: Գլխավոր գաղափարը աղոթքի միջոցով Աստծուն հասնելն է:

Ընդհանրապես, Եվագրի գործերն իրենց մեջ թաքնահարույց էություն ունեն: Խորհրդապաշտական ճանապարհի ամենավերին աստիճանում է տրվում Ս. Երրորդության (Հայր, Որդի, Ս. Հոգի) խորհրդի ճանաչողությունը: Պոնտացին իր աստվածաբանության մեջ քննության է առնում Ս. Երրորդության վարդապետությունը և Աստծո Մեկ, Միակ լինելու գաղափարը:[6]

Զգալի է Պոնտացու թողած ազդեցությունը հայ աստվածաբանական մատենագրության վրա: Նրա աշխատությունները թարգմանվել են հիմնականում հինգերրորդ դարում: Պոնտացու խորհրդապաշտական - աստվածաբանական հայացքների արտացոլումն ենք տեսնում Նարեկա վանքի մեծ ճգնողի՝ Գրիգոր Նարեկացու գործերում, թեև բացահայտ որոշակի հիշատակություն չունի Եվագրից, սակայն նրա «Մատյան ողբերգությանը» և Խրատները մեծապես ազդվել են նրա ճառերից:[7] Եվագր Պոնտացին հոգին բաժանում է

---

[6] Տես Творения Аввы Евагрия, (Аскетические богословские трактаты), Мартис-1994, ст. 144.

[7] Տես Բ. Սարգիսեան, Սրբոյ Հօրն Եւագրի Պոնտացւոյ Վարք եւ մատենագրութիւնք, Վենետիկ-1907, էջ ճԿ:

երեք մասի՝ բանական, ցանկասեր և ցասկոտ(զայրացկոտ). այս միտքը արտահայտել են դեռ հին հույն մտածողները: Առաջինին հատուկ է իմաստությունը, երկրորդին՝ սերը և ժուժկալությունը, երրորդին՝ արիությունը և համբերությունը: Իմաստությամբ մտահայվում են մարմնական և անմարմին իրերի լոգոսները, սիրով է պատկերվում Աստված, այլ կերպ՝ յուրաքանչյուր մարդ Աստծո պատկերն է: Եվագրն այստեղ որպես հիմք է ընդունում Ավետարանի հետևյալ սկզբունքը. «Կատարյալ եղեք, ինչպես որ ձեր երկնավոր Հայրն է կատարյալ» (Մատթ.5:48): Ժուժկալությամբ հոգին հրաժարվում է ցանկացած հաճույքից, հանդուրժողականությամբ և արիությամբ դիմակայում բոլոր թշնամիներին և վտանգներին: Հոգուն ամբողջությամբ բնորոշ է ուղղամտությունը, որն օգնում է հասնել հոգու տարբեր մասերի ներդաշնակությունը (համահունչ փոխներգործությունը): Նարեկացին նույնպես հոգին բաժանում է երեք մասի. երկու խորհրդապաշտ մտածողներն էլ այստեղ մարդուն նմանեցնում են երեքպարսպյան աշտարակներով ամրացած քաղաքի, երկուսն էլ իրենց աստվածաբանության մեջ գտնում են, որ մարդն Արարչի կատարյալ պատկերն է:[8] Եվագրի հունական նրբամտությամբ իմաստասիրած «Ընդդէմ պատասխանի առ դեւսն» և «Վեցհարյուրյակների» մեջ մարդկային խորհուրդները, կրքերը, ներգործությունները և վարդապետականները բանաստեղծորեն խտացված են «Մատյան ողբերգության» մեջ:

Աղոթքի մասին նրա ուսմունքից ազդեցություն է կրել աստվածաբանիմաստասեր Անանիա Նարեկացին: Անանիա Նարեկացու մոտ, ինչպես և Եվագրի երկերում քննության է առնվում Աստվածացման գաղափարը, որն ուղեկցվում է ներքին աղոթքով: Եվագր Պոնտացին կոչ է անում աղոթել արցունքներով, քանի որ Տերն ուրախանում է՝ տեսնելով, որ դու աղոթում ես արցունքներով: Անանիա Նարեկացին, շարունակելով նրան, ասում է. «Ինչքան կարող ես քո մեղքերը արտասուքով լվա»:[9]

Նա իր «Յաղագս զղջման և արտասուաց» երկում, կրկնելով գրեթե նույն միտքը, կոչ է անում ճգնել պահքով, ջերմեռանդ արտասուքով և անդադար աղոթքով, քանի որ արտասուքը հաշտեցնում է մարդուն Աստծո հետ:[10]

Անանիա Շիրակացու Խրատները, որոնցում հիշատակվում է Եվագրի անունը, փոխառություն են նրա «Վասն պաշտաման», «Առաջին լուսավոր

---

[8] Տես նույն տեղում, էջ ճԿԱ:
[9] Տես Անանիա Նարեկացի, «Նորին բանք Աղաւթից» Մ. Մ. ձեռագիր թիվ 2335 թերթ 284բ:
[10] Տես Հ. Թամրազյան, Անանիա Նարեկացի, Երևան –1986, էջ 236:

պատերազմաց», «Ժառանգորդք Աստուծոյ» ճառերի:[11]

«Հաղագս ութ խորհրդոց մեղաց» երկը հայտնի է Մատթեոս Ջուղայեցու մեկնությամբ: Մեկնիչը, քննության է առնում յուրաքանչյուր «չար խորհուրդը»՝ արծաթասիրություն, տրտմություն, բարկություն, հպարտություն և այլն, դրա առաջացման պատճառները և դրանից ազատման ուղիները: Այսպես օրինակ, խոսելով ամբարտավանություն կոչված մեղքի մասին, ասում է, թե ամբարտավան մարդը նման է անպտուղ ծառի, որը վերև բարձրանալով ոչ ոքի պետք չէ, քանի որ նա առաքինությունից է զուրկ:[12]

13-րդ դարի հայ աստվածաբան Վարդան Արևելցին իր «Ճառերում» վկայաբերում է տարբեր հատվածներ Եվագրի երկերից: Նա իր Ճառերից մեկում, Աստծո բնության մասին խոսելով, վկայակոչում է Եվագրի այն միտքը, որ Աստված մեկ ու միակ է, գերպարզ անտրոհելի բնություն: Եթե մենք՝ եղական արարածներս, բաղադրված ենք զանազան տարրերից, ապա Աստված ունի անլուծելի, բարի, լավ, անխառն, միատարր բնություն: Ադամորդիներից նա, ով հաղորդակից է այդ գերպարզ լավին ու բարուն, մոտ է Աստվածությանը:[13]

Հայ միջնադարյան մատենագրության մեջ առանձին տեղ են գրավում «Վկայութիւնք» կոչվող ժողովածուները, որոնցում առկա ասույթներն ու իմաստասիրությունները կիրառվել են քարոզներում: Այդպիսի մի ժողովածու է հեղինակել Ալեքսանդր Ջուղայեցին (17-18–րդ դդ.), որտեղ կան նաև քաղվածքներ Եվագր Պոնտացու մատենագրական վաստակից: Ասույթներն իրենց իմաստային բովանդակությամբ ունեն բարոյաբանական, խորհրդապաշտական, դավանաբանական բնույթ: «Հավատը, Հույսը, Սերը երեքպարսպյան ամրությամբ քաղաք են հավատացյալի համար»,- ասվում է այնտեղ: «Գլխի զարդը պսակն է, իսկ սրտի զարդը՝ գիտությունը»:[14]

Ամփոփելով նշենք, որ «Եւագրիոս Պոնտացին իր գործունեայ կեանքով, ճգնողական զարմանագործություններովն և նուրբ հանճարի չքնաղ արտադրութիւններով», հայ աստվածաբանական մատենագրության վրա թողած ազդեցությամբ բավականին խորը քննության և ընդարձակ ներկայացման կարիք ունի, քանի որ նրա երկերից ազդվել են Մխիթար և Կիրակոս Երզնկացիները, Հովհաննես Գառնեցին, Գրիգոր Իմաստասեր Մարաշցին, և այլ մատենագիրներ:

---

[11] Տես Բ. Սարգիսեան, Սրբոյ Հօրն Եւագրի Պոնտացւոյ Վարք եւ մատենագրութիւնք, Վենետիկ-1907, էջ ԾԿԲ:
[12] Տես Մատթեոս Ջուղայեցի, «Հաղագս ութ խորհրդոց մեղաց Եւագրի Պոնտացւոյ», Կ. Պոլիս, 1750, էջ 139:
[13] Տես Վարդան Արևելցի, «Ճառք, Ներբողեանք», Երևան 2000, էջ 10:
[14] Տես Ալեքսանդր Ջուղայեցի, «Ասույթներ քարոզների համար», էջմիածին-1998, էջ 82: